

ԵՐԱՆԻԿ ՄՊ. ԿԷԼԻՊՈԼՈՒՑԻ.— Ս. Յակոբի վանքին յիշատակ կը թողու Ռուսիայի երկաթուղիի արժեթուղթ մը. Ս. Յակոբի վանքի սեղանատան կամարի տակ կէս մթերանոց մը, որուն համար կոնդակ մը տրուած է 1877 թուականով, կէս մթերանոց Յոպպէ, կէս մթերանոց մ'ալ Երուսաղէմի մէջ, վերջինս ընկերակցութեամբ իր քրոջ դստեր՝ Մարիամին:

ԵՐԵՄԻԱ Ա.Բ.—Մբ. 1703 ին կը միաբանակցէր. կը յիշուի Մինաս Ամդեցիի Օրագրութեան մէջ:

ԵՐԵՄԻԱ Ա.Բ. ԱՐԱՄԵԱՆ, ՊՈԼՍԵՑԻ.—Մբ. Ե. 1873 ին, 20. 1925 ին. կը վախճանի 1926 Յունիս 27 ին:

ԵՐԵՄԻԱ Ա.Բ. ՀԱՂԲՍԵՑԻ.— (ՄՁ. թ. 612), Աղթամարի վանքին ձեռագիր Սաղմուսումն յանագիրքի մը յիշատակարանին համաձայն, Տիրացու Երեմիա (յետոյ տը.) Ս. Յակոբի վանքին մէջ ընդօրինակած է զայն Սարգիս քհ. Փայասցիին (Այաս) համար. ահա յիշատակարանը. «... տէր Սարգիս կոչեցեալ ի յերկրէն Հոռոմոց և ի քաղաքէն Փայասու. որ եկն սուրբ քաղաքն Երուսաղէմ, ի յուխտս սուրբ տնօրինականացն Բրիստոսի եւ փափաքանօք կացեալ տարի մը բոլոր ի սուրբ քաղաքս Երուսաղէմ ի սուրբ Յարութեան Բրիստոսի եւ սուրբ Յակոբայ ծառայութիւն եւ սպասաւորութիւն առնելով և սրտի փափաքն լնելով: Տեսեալ գտարբ զԻրքս և փափաքելով սմա. ստացաւ զսա ի հալալ ընչից և ի յարդեանց իւրոց ի թվին Հայոց ՌձԺԴ (= 1665) յիշատակ իւր եւ ծնողացն, հօրն՝ Միևսաիև և մօրն՝ Աննայիև եւ եղբարցն՝ պարոն Յովհաննէսիև եւ Մահեստի Խաչերիև և որդւոցն Միևսաիև և Մարտիրոսիև և ամենայն արեան մերձաւորացն . . . արդ եղև զրաւ զընթեան սորա ի թվ. Հայոց ՌձԺԴ (= 1665), ի սուրբ քաղաքս Երուսաղէմ. ընդ հովանեաւ սը. Յակոբայ և սուրբ Հրեշտակապետաց և այլ տնօրինականացն Բրիստոսի ի սուտ, ի տխմար եւ անխմաստ գրէ՛ տիրացու Երեմիայէ:» (Լարս. Յուր. էջ 47-48): Հաւանաբար իր ընդօրինակութիւններն են (ՄՁ. թ. 5) ձաշոցը, ՌձԺԹ (= 1670) թուականով, որուն ստացողն է Թէոդորոս Տարոնեցի Երուսաղէմի պարք.ը: 1677 ին Ս. Յակոբի մէջ գրուած Հաւաքածոն (ՄՁ. թ. 496) որուն ստացողն է Նահապետ փրդ. (յետոյ կթղ. ի Ս. Էջմիածին), նաև 1679 ին Պսմ. Միխ. Ասուրոյ եւ Մ. Խորենացոյ (ՄՁ. թ. 692), վանեցի տը. Յովհաննէսի համար: